

աշխատութեան հետ սաստիկ տխրութիւնը, զգաւէն յուղարկեց առ Ներսէհ Կամսարական եւ Արփէնին ուզեց հոստան, ի մխիթարութիւն եղբօրը: Կասկածելով իրաւամբ թէ՛ Մամիկոնեանց Մուշեղէն եւ թէ՛ դաւաճան Մոկաց Արդուկէն, որ կը խլրտէին՝ զօրաց մեծ մասը Գրիգորի յանձնելով Բաղէշ նստուց եւ բացարձակ հրաման տուաւ, որ ամենափոքր նշան թշնամութեան կամ յարձակումն տեսած ժամանակ նոցայ կողմէն սանձահարէ ամէն արարք: Նոյնպէս Ոստանի շուրջը մեծ խումբ զօրաց կը բանակէր Վարդի յանձնած: Եւ ինք անձամբ շատ անգամ կ'երթար շրջակայքը տեսնելու թէ իրօք պէտք եղած ամրութիւնք եւ գիւղերու պատսպարանք ըստ արժանւոյն շինուա՞ծ էին. ամէն գիւղ եւ աւան գանգատներ կը քննէր. իւր ճանապարհորդութեանց ընկեր առած երկու համեստ դատաւոր եւ Ռշտունեաց եպիսկոպոսը՝ նոցայ որոշմունքը շուտովի գործ կը դնէր. անիրաւները, հարկահան, աւանապետ կամ գիւղապետ, աւազակները, ազատ կամ անազատ Աղթամարայ բերդին մէջ շղթայակապ կ'ուղարկէր աշխատելու: Ռշտունեաց գաւառն այն օրերը տեսնողը կը զարմանար. երկրագործ, հովիւ, արհեստաւոր, երիտասարդ եւ պատանի, ամէնքը զինեալ, բայց ոչ ուրեք անկարգութիւն մը չէր նշմարուէր, վասնզի զէնք քաշել կռուի կամ վեճի մէջ սաստիկ խստութեամբ կը պատժուէր:

Ուստի Թեոդորոսի հեռաւորութեան միջոցին ոչ մէկ թշնամի չտեսնուեցաւ, որ համարձակէր մտնել այն երկիրը, իսկ երբ իւր Զայաստան դարձը լսուեցաւ՝ Սեթայի սիրտը հանգստացաւ բոլորովին, եւ օրաւոր կը սպասէր Նորա դարձին, բայց տարին կ'անցներ, կը լրանար, եւ մեծ իշխանն այսօր, վաղը կ'ուշանար: Գրիգորի հրաման եղած էր արդէն գալ բնակիլ հոստան, վասնզի բանակը, որ Բաղէշ կը սպասէր՝ ցրուելու միտք ունէր Տիկինը. շրջակայք բոլոր Թեոդորոսի գալստեամբ բարեկամ կը տեսներ ինք եւ զօրքերն հետզհետէ տուններին կը ճամփէր: Գրիգոր կուգէր դառնալ Երթալ Բագրեւանդ, իւր հայրենի տան աւերակներուն, իւր մօր աճիւններուն այց ընել, ուստի թեպէտ իւր սրտին մեծ մխիթարութեօն էր Թենի, եւ նոյնպէս ուրախ աչօք կը տեսներ Նորա իւր մէկ հատիկ քրոջ վրայ ցցուցած սերն ու բարեկամութիւնը, բայց երբ Թեոդորոս նստած էր Դուին, հոն էին իւր քեռիքն եւ հօրեղբօրօրդին Զամազասպ, հոն գրեթէ հայոց բոլոր մեծ նախարարք, ինք զարմանքով կը մնար թէ ինչո՞ւ զինք չէին հրաւիրէր գալ եւ հայրենի ժառանգութեան տիրանալ: Ուստի Սեթայի հետ այս խօսակցութիւնն ունեցաւ...

— Որովհետեւ իշխանը, փառք աստուծոյ, ողջ-առողջ հասաւ, եւ վտանգի սպառնալիք չմնաց մեզ համար, Տիկին, կարծեմ թէ ինձ հրաման կրնաք տալ, որ երթամ եւ Դուին ու Բագրեւանդ շրջան մը ընեմ: